

ԲՀԱԳԱՎԱԴԳԻՒՏԱ՝ ԿԱՄ ԵՐԱՆԵԼՈՒ ԵՐԳԸ.

(Շարունակութիւն)

ԺԵ.

Կրիւնան խօսեց.

Արմատները բարձր, ճիւղերը ցածր մի թղենի կայ յաւիտենական բանաստեղծութիւններ են նրա տերւները. ով նրան ճանաչում է՝ նա յիշատակէր է:

Գէպի ցածր ու գէպի բարձր տարածւում են իր ճիւղերը, որոնց ոստերը Յատկութիւններն են, ու ծիւերը Ձգայութիւնները. գէպի ցածր երկարած արմատներ էլ ունի, որոնք գործերով կապկապում են մարդկանց աշխարհում:

Ոչ նրա ձեն են ըմբռնում այս աշխարհում, ոչ վերջը, ոչ սկիզբը և ոչ տեղը: Նրբ մէկը այս հաստարմատ թղենին անտարբերութեան ամուր սրով կտրէ,

Թող այն ժամանակ փնտռէ այն անդառնալի վայրը՝ ուր գնացողը էլ չի դառնում: Գէպի այդ սկզբնական Առնական զօրութիւնը եւ եմ առաջնորդում, որից առաջացել է աշխարհի վաղեմի բղխումը:

Նուաճելով հպարտութիւնը, մոլորութիւնը, միտքը յառած Գերագոյն Հոգուն, հեռացրած ցանկութիւնները, ընկճած հաճոյքի և ցաւի կռիւը, գնում է անմոլոր գէպի յաւիտենական ճանապարհը:

Արեւը չէ, Լուսինը չէ, Կրակը չէ որ լուսաւորում է այն վայրը, ուր գնացողը էլ չի դառնում. այնտեղ իմ գերագոյն ընակարանն է:

Իմ մի՛ մասնիկս՝ Կենսատու և յաւիտենական՝ կեանքի այս աշխարհում իրեն է քաշում միտքը և բնութեան մէջ գտնուած վեց զգայարանները:

Նրբ մարմին է զգենում կամ նրան թողնում այս Գերագոյն տէրը, իր հետն է վերցնում նրանց իր ընթացքի ժամանակ, ինչպէս քամին որ լցւում է բոյրերով:

Լսելիքը, աչքը, շօշափելիքը, ճաշակելիքը, հոտոտելիքը և միտքը գրաւելով, նա զգայութեանց հետ հաղորդակցում է:

Հեռանալիս, ներկայ լինելիս ու գործելիս էլ սղատը մտքերը չեն տեսնում նրան այս Յատկութեանց մէջ. տեսնում են միայն նրանը, ովքեր ունին գիտութեան աչքեր:

Ովքեր կատարում են Նօգան, նրան տեսնում են իրենց անձի մէջ ներկայ. բայց ովքեր կատարում են ու դեռ չեն

կատարելագործուած, ընդունակ չեն նրանց տեսնելու:

Այն լոյսը որ ցոլանում է արեգակից բովանդակ աշխարհի վրայ, այն որ վայլում է Վաւանի ու Վրակի մէջ, գիտցի՞ր թէ դա իմ լոյսն է:

Երկրի մէջ թափանցելով՝ էակներին ես պահում եմ իմ ուժով, սնուցանում եմ խոտերը բոլոր ու դառնում քաղցրահամ սոմա:

Ես ջերմութիւն դառնալով շնչող մարմիններն եմ թափանցում և ներշնչութեան ու արտաշնչութեան միանալով իւրացնել եմ տալիս շորս սնունդները:

Ես բնակում եմ բոլոր սրտերի մէջ, ինձնից են յիշողութիւնը, գիտութիւնը և դատողութիւնը: Բոլոր Վեդաների մէջ ես եմ ճանաչելին, Վեդաների հեղինակ ու վեդայագէտ եմ ես:

Ահա երկու Առնական զօրութիւններն աշխարհում. մին բաժանելի և միւսն անբաժանելի. բաժանելին բոլոր էակների մէջ է, անբաժանելին կոչւում է գերադոյն:

Բայց կայ և մի ուրիշ գերադոյն Առնական զօրութիւն՝ անայլայլ ու գերիշխան, որ Գերադոյն Հոգի է կոչւում, որ երեք աշխարհները թափանցելով պահում է նրանց:

Եւ որովհետեւ ես գերազանցում եմ բաժանելին ու նոյն իսկ Գերադոյն անբաժանելին, ուստի աշխարհում ու Վեդայում կոչւում եմ Գերադոյն Առնական Զօրութիւն, նա ամենաագէտ է և պաշտում է ինձ իր ամբողջ էութեամբ:

Ահա ամենախորհրդաւոր վարդապետութիւնը բացատրեցի քեզ. ով այս գիտէ, իմաստուն է և նրա դործը լրանալու է:

Այսեղ վերջանում է Բհագավադգիտա՛յի տասնհինգերորդ գլուխը, որի անունն է Գերադոյն Առնական Զօրութեան հասնելու Նօգա:

ԺԶ.

Կրիշնան խօսեց.

Անկեղծութիւն, ճշմարտասիրութիւն, գիտութեան Եօգայի մէջ յարատեւութիւն, ողորմածութիւն, չափաւորութիւն, բարեպաշտութիւն, մաախոհութիւն, օգնութիւն, շիտակութիւն,

Խաղաղասիրութիւն, ճշմարտախօսութիւն, քաղցրու-

թիւն, հրաժարում, անդորրութիւն, բարեւրտութիւն,, դուժ-
դէպի էակները, հանգստութիւն, հեղութիւն, ամօթխածու-
թիւն, լրջութիւն:

Կորով, համբերութիւն, հաստատակամութիւն, մաքրու-
թիւն, վարուեցողութիւն, համեատութիւն, ահա աստուա-
ծային ծնունդի յատկութիւնները, ո՞վ Բհաճատա:

Կեղծաւորութիւն, հպարտութիւն, ունայնամտութիւն,
բարկութիւն, վայրահաջութիւն, տգիտութիւն. ահա Ասու-
րայի ծնունդի յատկութիւնները:

Աստուածային ծնունդը ազատութիւն է. Ասուրայի ծը-
նունդը գերութիւն: Մի՛ տխրիր, դու աստուածային ծնունդ
ես, ո՞վ Պա՛նդուի որդի:

Երկու ընութիւն կայ աշխարհում. աստուածային ու
Ասուրաների. աստուածայինը ընդարձակօրէն բացատրեցի.
այժմ լսիր Ասուրաներին:

Ծագումն ու վերադարձը չեն ճանաչում Ասուրայի մար-
դիկ. ոչ մաքրութիւն, ոչ կանոն, ոչ ճշմարտութիւն կայ
նրանց մէջ:

Առանց ճշմարտութեան, առանց կարգաւորութեան ու
առանց նախախնամութեան են համարում աշխարհը, և թէ
իրը մին միւսն առաջացնող երեւոյթներ ու դիպուածի ար-
դիւնք:

Այս հայեացքի մէջ մնալով, կորցնում են իրենց հոգին,
նուաստացնում բանականութիւն, անցաւոր են լինում վայ-
րադ գործերի և թշնամի են մարդկային սեռին:

Անհատուր անյադ ցանկութեանց, հակուած խաբերա-
յութեան, ունայնամտութեան ու յիմարութեան, մոլորու-
թիւնը տանում է նրանց վատ արարքների ու ներշնչում պիղծ
ցանկութիւններ:

Խորհուրդները դատում, մահը կարծում են ամէն բանի
վերջ. և աշխատում են յադեցնել իրենց ցանկութիւնները,
նրանց մէջ տեսնելով ամէն բան:

Հարիւրաւոր յոյսերով ու անյուսութիւններով կաշկանդ-
ուած, ցանկութեան ու բարկութեան անձնատուր, աշխա-
տում են իրենց ցանկութիւնը վայելելու համար, անարդար
միջոցներով հարստութիւն դիզել:

«Ահա ինչ շահեցայ այսօր. ու պիտի վայելեմ այս ինչ
հաճոյքը. այս ունեմ, շուտով պիտի ունենամ այս ինչ
օգուտն էլ»:

«Սպանեցի այս ինչ թշնամուս. պիտի սպանեմ նաև
միւսներին. իշխան եմ ես. ես հարուստ եմ. երջանիկ եմ ես,
հզօր, ուրախ»:

Պերձ ու մեծ իշխան եմ. ո՞վ կայ ուրիշ ինձ նման. զոհեր կանեմ, ողորմութիւն կտամ, հաճոյք կը վայելեմ: Ահա ինչ են ասում՝ տղիտութեամբ մոլորուած:

Բաղմաթիւ մտածմունքներով խռովուած, մոլորութեան ցանցի մէջ պաշարուած, դբադուած, իրենց ցանկութեան վայելումով, ընկնում են պիղծ դժոխքի մէջ:

Ինքնավստահ, յամառ, հարստութեան սնափառութեամբ և յիմարութեամբ լցուած, զոհում են անուանական ողջակէզներ՝ կեղծաւորութեամբ և առանց ծիսական օրինակատարութեան:

Ետակէր, կատաղի, սնափառ, ցանկութեան ու բարկութեան հպատակ, անարգում են ինձ իրանց անձի և ուրիշների մարմնի մէջ՝ ստորացնելով:

Դրանց, այդ քինախնդիր, կատաղի ու ստորին մարդկանց ես ներում եմ մահուան յարափոխութեանց մէջ, թշուառօրէն վերածնելու սատանաների արդանդներում:

Սատանաների արդանդի մէջ ընկնելով, թափառելով ծնունդից ծնունդ ու ինձ երբեք չհասնելով՝ վերջապէս գնում են դժոխքի ճանապարհը:

Երեք են դժոխքի դռները, որով կորչում են մարդիկ. ցանկասիրութիւն, բարկութիւն և ազահութիւն. այս երեքին պէտք է թողնել:

Այն մարդը՝ որ հեռացել է խաւարի այս երեք դռներից, քայլում է դէպի անձի փրկութիւնը և գնում է գերազոյն ճանապարհը:

Բայց ով Յրէնքի պատուէրներից հեռանալով հետևում է իր ցանկութեանց կատարման, նա կատարելադործութեան չի հասնում, ոչ էլ երջանկութեան, ոչ էլ գերազոյն ճանապարհին:

Թող Յրէնքը քո հրամայողը լինի ու սովորեցնի ինչ պէտք է դորձել ու ինչ չպէտք է դորձել: Սովորելով օրէնքի պատուիրանների թոյլատրած դորձերը, հաճի՛ր դորձել այս աշխարհում:

Այսեղ վերջանում է Բնագավաղգի՝ Եսայի Եսայիքի գլուխը՝ որի անունն է Ասուածային ու սասանայական ծննդեան Զարբերութեան Եօզա:

ԺԷ.

Արքունիան խօսեց.

Նորա որ Յրէնքի պատուէրներէց հեռանալով զոհուած են լի հաւատքով, ո՞րն է նոցա տեղը, ո՞վ Կրիշնա, արդեօք ճշմարտութեան, բնազդի ու խաւարի:

Կրիշնա խօսեց.

Երեք տեսակ հաւատք կայ մարդոց մէջ, որոնք բնածին են ու ծագում են ճշմարտութիւնից, բազդից կամ խաւարից:

Ամէնքի ճշմարտութեան կերպարանքը հաւատքն է, ո՞վ Բհաճրատա. և հաւատացեալ մարդը ինչպէս հաւատքն է, այնպէս էլ ինքն է:

Ճշմարտութեան մարդիկ զոհուած են աստուածներին. բնազդի մարդիկ Նաքշտներին ու Ռաճշասաններին. խաւարի մարդիկ ոգիներին և ուրուականներին:

Մարդիկ որ առանց Յրէնքը պահելու, անում են խիստ ճգնութիւններ, ու սնափառ, եսասէր և ցանկութեամբ, կրքով ու կատաղութեամբ լի են.

Եւ չարչարում են իրենւ ժարմնի մէջ բնակուած կենսական սկզբունքերն անմտութեան ինչպէս և ինձ՝ որ նոցա ներքին մարմնում եմ բնակում, գիտցիր թէ նորա սատանայամիտ են:

Մարդոց համեմատ կան և երեք տեսակ հաճելի սնունդ, զոհ, ճգնութիւն ու ողորմութիւն. լսի՛ր նրանց տարբերութիւնը:

Կեանք, ճշմարտութիւն, ուժ, առողջութիւն, երջանկութիւն և ուրախութիւն աւելացնող համեզ, քաղցր, հաստատուն ու անուշ սնունդները ճշմարտութեան մարդոց են հաճելի:

Կծու, թթու, աղի, շատ տաք, դառն, տախ, տաքացնող սնունդները կրքի մարդկանց հաճելի են, իբր ցաւով ու հիւանդութեամբ բեղուն:

Հնացած, անհամ, հոտած ու նոյն իսկ դէն դցած ու կեղտոտ սնունդները խաւարի մարդկանց հաճելի են:

Առանց վարձատրութեան սպասելու և Յրէնքի համաձայն կատարուած զոհը, որ զոհում է սուրբ գործը կատարելու մարով, ճշմարտութեան զոհն է:

Իսկ այն որ վարձատրութեան սպասելով ու կեղծաւորութեամբ է զոհում, գիտցիր թէ դա ցանկութեան զոհն է:

Առանց օրէնքի, առանց մատաղ բաժանելու, առանց աղօթքի, ժամոցի ու հաւատքի արուած զոհը խաւարի զոհն է:

Աստուածներին, Բրահմաններին, ուսուցչին և ուսում-

նախանին մատուցուած յարգանքը, մարբութիւնը, շիտակութիւնը աստուածաժայել ընթացքն ու հեղութիւնը՝ մարմնի զնութիւն են կոչուում:

Մեղծ, ճշմարտախօս ու քաղցրահամբոյր լեզուն և կրօնական գրքերի ընթերցումը խօսքի ճգնութիւն են կոչուում:

Մտքի անդորրութիւնը, խաղաղութիւնը, լռութիւնը, անձնազոպութիւնը, անձի մարբութիւնը, ահա թէ ինչը մտքի ճգնութիւն է կոչուում:

Ձերմեռանդ հաւատքով ու առանց վարձատրութեան արուած՝ մարդկանց այս երեք ճգնութիւնները ճշմարտութեան ճգնութիւնն են:

Փառքի, պատուի ու յարգանքի համար կեղծաւորութեամբ արուած ճգնութիւնը կոչուում է կրքի ճգնութիւն, որ անհաստատ է ու անստոյգ:

Մոլորուած երեւախայութեամբ իր անձի չարչարման և ուրիշների կորուստի համար արուած ճգնութիւնը՝ խաւարի ճգնութիւնն է:

Լոկ ողորմութեան համար, առանց փոխարէն վճարի, ու տեղի, ժամանակի և արժանիքի համեմատ արուած ողորմութիւնը ճշմարտութեան ողորմութիւնն է:

Իսկ փոխադարձ վճարի կամ վարձատրութեան յուսով և իբր ակամայ արուած ողորմութիւնը բնազդի ողորմութիւնն է:

Տեղին, ժամանակին ու արժանիքին անհամաձայն, առանց ակնածութեան և վիրաւորիչ ողորմութիւնը խաւարի ողորմութիւնն է:

«Օ՛ժ. Նա. Բարին» ահա Բրահմայի երեք աշխարհային անուանակոչութիւնները. Բրահմանները, Վէդաներն ու Չոհը նրանից ստեղծուեցին հնապէս:

Ուստի Օ՛ժ բառը չարտասանած, օրինական զոհը, ողորմութիւնն ու ճգնութիւնը չեն անուամբ երեք աստուածաբանները:

Նա. այսպէս են ասում նրանք՝ որ առանց սպասելու վարձատրութեան, զոհի, ճգնութեան ու ողորմութեան զանազան գործեր են կատարում, ազատութեան փափաղով:

Ճշմարտութիւնը և ուղղամտութիւնը բարի են կոչուում. և գովելի ամէն գործ նոյնպէս բարի է կոչուում:

Չոհի, ճգնութեան ու ողորմութեան մէջ յարատեւութիւնը բարի է կոչուում:

Առանց հաւատքի զոհը, ողորմութիւնը, ճգնութիւնը, գործը չար է կոչուում, և ոչինչ է թէ այս ու թէ այն աշխարհում:

Այսեղ վերջանում է Բհագավադգի՛տա՛յի տասնութերորդ գլուխը՝ որի անունն է Հաւասֆի երեք տեսակների եօզա:

(չարունակելի)

Հ. Աճառեան